



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԸ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐք
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՄ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՏՈՎՈՐԻՉ»
ՇՔՄՇՀԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐԴՆՈՒԹԵԱՄ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱ ԵՂԲԱՅՐՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱ
ՍՊԱՍԱԲՈՐՆ
ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՄ
ՄԱՆՈՒԿՅԱՆ,
ՈՐ ՅԵՐՈՒՍԱԼԵՄ, ԽՄՐԱՅԻ**

Զերդ Ամենապարուրիթին, սիրելի Պատրիարք Եղբայր,

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յուս
ևնք Զեզ Եղբայրական Սեր Ձերմ զգացումներն ու բարեմաղթանքները և խնդագին
գոհունակութեամբ անդրադառնում Զեր արդինաշադր ծառայութեանը:

Սիրել Ասպժոն, ծառայել հարազադ ժողովրդին և ամենայն շանք ներդնել ի
փառա Առաքելահասպագ և Լուսատրչապսակ մեր Սուրբ Եկեղեցու,- այս է եղել
նուիրեալ Եկեղեցականիդ և Երուսաղէմի Սուրբ Աթոռի շնորհազարդ գահակալիդ
60-ամեայ սպասաւորութիւնը, որ Բարձրեալի օրինութեամբ շարունակուում է ան-
նուաց նախանձախնդրութեամբ ու նուանդով: Նովուից մինչ Առաջնորդ ու Երուսաղէ-
մի Սուրբ Աթոռի Պատրիարք անցած Զեր ուղին լեցուն է Եկեղեցաշէն ձեռքբերումնե-
րով ու յաջողութիւններով: Նաւարաւոր Զեր խօսքը, հեղինակած Եկեղեցագիրական
գրքերը, Զեր ձեռքով հիմնուած ու օծուած Եկեղեցիները, օրինուած դպրոցներն ու ազ-
գային այլ հաստապութիւնները արդայայդութիւնն են Զեր բոլորանուէր ծառա-

յութեան՝ մեր ժողովրդի կեանքից ներս յաւելելով հաւաք, իմացութեան լոյս և միաբանութեան սէր: Զեր նկագմամբ մեր ժողովրդի զաւակների անկեղծ սէրն ու յարգանքը ինչպէս Միացեալ Նահանգներում, այնպէս և Երուսաղեմում, լաւագոյն վկայութիւններն են Տիրոց սպասաւորի սուրբ առաքելութեան հանդէպ դրսեւորած Զեր անձնուիրութեան:

Մենք միշկ սիրով պիտի յիշենք Հայրապետութեան առաջին փարում Մեր անդրանիկ այցը Երուսաղեմի Հայոց Պապրիարքութիւն: Սուրբ Ծննդեան հոգենորոգութիւնն ու խնդրութիւնը Մեր հոգում յաւելուց զինուորեալ միաբանութեան հետ աղօթքով և Սրբոց Յակոբեանց Ուխտի ժառանգութեան հետ հաղորդակցութեամբ: Վըստահ ենք, որ դժուարին այս ժամանակներում Զերդ Ամենապարուութեան հարուստ փորձառութեան եւ նախանձախնդրութեան շնորհիւ Սուրբ Աթոռը պիտի շարունակի շենանալ ու պայծառանալ՝ ի միխթարութիւն բարեպաշտ մեր ողջ ժողովրդի:

Գոկուրութիւն Ասպուծոյ, որ մեր Եկեղեցուն պարզենի է Զեզ պէս նուիրնալ սպասաւոր, ում անսակարկ ծառայութիւնը եւ աննուազ սէրը հանդէպ Մայր Եկեղեցին ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը լաւագոյն օրինակ է երիտասարդ մեր հոգենորականաց համար:

Սիրելի Պապրիարք Եղայր, Զեր ծառայութեան ու վաստակի ամենաբարձր զնահարանքով Հայրապետական այսու Կոնդակով ուրախութիւն ունենք շնորհելու Զեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

պարուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի հայցում ենք, որ Բարին Ասպուած հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարզենի Զեզ քաջառողջ երկար զահակալութիւն՝ ի բարօրութիւն Երուսաղեմի Հայոց Պապրիարքութեան եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Մայր Եկեղեցու:

«Ճնորհք Տեառն մերոյ թիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն»:

Եղբայրական սիրոյ ողջունի,

Աղօթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱԱՅՅՆ ՇԱՑՈՅ

Տուա Կոնդակս ի 23-ն սեպտեմբերի

յամի Տեառն 2001 եւ ի թուին հայոց ՈՆԾ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 84